

ՀԱՐՍԱՆՈՒՄ ԵՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ

Հանրապետության գիտական հիմնարկների կյանքում որոշակի դեր է կատարում գրականության և արվեստի թանգարանը: Հայ նոր գրականության, թատրոնի և երաժշտության հարցերի լուսաբանությանը նվիրված գիտական բոլոր ուսումնասիրությունների համար հիմք են ծառայում այստեղ պահպանվող ավելի քան կես միլիոն մեծ ու փոքր ձեռագրերը՝ ստեղծագործությունների ինքնագրեր, պաշտոնական գրություններ, նամականիներ, լուսանկարչական նյութեր և այլն: Հայ դասականների ստեղծագործությունների գիտական և մասսայական հրատարակությունները նույնպես նախօրոք ստուգվում են այստեղ պահպանվող ձեռագիր սկզբնաղբյուրների հիման վրա:

Թանգարանի ձեռագիր հավաքածուները տարեցտարի ավելանում են: Միայն անցած տարում նվիրատվությունների և գնումների միջոցով ձեռք է բերվել հայ մշակութի պատմությանը վերաբերող ավելի քան 25 հազար վավերագիր և լուսանկար:

Գրական բաժնում, նոր ստացված նյութերի մեջ, հատկապես մեծ արժեք են ներկայացնում 1915 թ. ապրիլյան եղեռնի ղոհ երկու նշանավոր գրողների՝ Մելքոն Կյուրճյանի (Հրանդ) և Դանիել Վարուժանի կյանքին ու գործունեությանը վերաբերող ձեռագրերի հավաքածուները, որոնցից առաջինը ստացվել է Բեյրութից՝ գրողի հարապատենից, իսկ երկրորդը՝ Կասաբլանկայից:

Այդ երկու հեղինակների արխիվներն ստեղծելու համար թանգարանում նյութեր էին կենտրոնացվել դեռևս մի տասնամյակ առաջ: Նոր ստացված նյութերը ավելի են ամբողջացնում նրանց անունով ստեղծված ֆոնդերը: Այժմ արդեն հնարավոր է դառնում իրականացնել այդ հեղինակների երկերի գիտական ուսումնասիրությունը և հրատարակությունը: Կյուրճյանին վերաբերող վավերագրերի մեջ են նրա մի շարք մանկավարժական բնույթի հոդվածները և Կոռնելից, Ռասինից, Շեքսպիրից կատարած թարգմանությունների ձեռագրերը: Վարուժանի արխիվը, բացի արժեքավոր կենսագրական նյութերից, պարունակում է նրա գեղագիտական ու քաղաքական հայացքները լուսաբանող վավերագրեր: Մի արժեքավոր ընդհանուր տեսրի մեջ Վարուժանը մոտ մեկ տասնամյակի ընթացքում օրը-օրին գրի է առել իր ստեղծագործությունները, գրեթե բոլոր բանաստեղծություններում կատարել հավելումներ և ճշտումներ, որոնց մի մասը հաշվի չի առնվել նրա ստեղծագործությունների հրատարակության ժամանակ:

Նոր ձեռք բերված նյութերի մեջ հատուկ ուշադրության են արժանի գրող Էդոն Շանթի մոտ վեց տասնյակ նամակները՝ ուղղված Հովհաննես Թումանյանին, որտեղ նա զարդացնում է իր գրականագիտական հայացքները, քննադատական խոսք ասում հատկապես 1910-ական թվականների գրական կյանքի մասին:

Ստամբուլից, գրող-մանկավարժ Ատրինե Տատրյանի ջանքերով, Հայաստան է տեղափոխվել «Հայ կին» հանդեսի բազմամյա խմբագիր, գրող Հայկա Նուշ Մառքի արխիվը, որի մեջ է հիշյալ հանդեսի լրիվ հավաքածուն, Մառքի

արձակ, չափածո զրվածքների, գրականագիտական հոգվածների մեծ մասի ձեռագրերը, ինչպես և իր ժամանակակիցների հետ ունեցած նամակագրությունը:

Թանգարանի սլարսկահայ լարեկամ բանաստեղծ Դեռ Թանգարան է ուղարկել սլարսկական մամուլում Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ լույս տեսած Բաֆու, Պ. Դուրյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Սիամանթոյի, Մ. Մեծարենցի, Ալ. Մատուրյանի, ինչպես և Գ. Սարյանի, Շիրազի, Ի. Էմինի, Վ. Դավթյանի և այլոց հրկերը: Այսպիսով, Թանգարանում ստեղծվել է հայ-սլարսկական դրական կապերն արտացոլող մի ուշագրավ հավաքածու:

Պատմարան-արևելագետների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում դարասկզբի թուրքական մամուլում սլարսկական թուրքիայի այն ժամանակվա արտաքին դործերի մինիստր Գաբրիել Նորատունկյանի գործունեությունը վերաբերող մոտ հարյուր հոգվածների հավաքածուն, որը Բեյրութից Թանգարան է ուղարկել Ա. Ջուհերյանը:

Արտասահմանից ստացված նյութերի մեջ մեծ արժեք են ներկայացնում Ահարոն Տատուրյանի և Հակոբ Անտոնյանի արխիվները. դրանք ոչ միայն բնութագրում են սովյալ հեղինակների ստեղծագործությունը, այլև արժեքավոր նյութ տալիս սփյուռքահայ դրական-մշակութային կյանքի մասին:

Տեղում ձեռք բերված արխիվներից վերջին հիսնամյակի սովետահայ գրական կյանքի մասին արժեքավոր շատ նյութեր են գտնում գրականագետներ Սարգ Սուքիասյանի և Հրայր Մուրադյանի հավաքածուներում:

Թանգարանի թատերական բաժնի ֆոնդերը հարստացել են Սիրանուշիկ վերաբերող նյութերով, որոնք իր արտասահմանյան ճանապարհորդությունների ընթացքում, դերասանուհու թոռ Պարույր Կիրակոսյանից (Զիլի) ստացել և Թանգարան էր բերել հանգուցյալ Գարեգին Սևունցը: Այստեղ կան ուղերձներ և շնորհավորական նամակներ Սիրանուշիկ բնական դործունեության 35-ամյակի առթիվ: Բացի այդ, թատերական բաժինը ձեռք է բերել անցյալի թատերական դործիչներ Ամիրան Մանդինյանի և Գեղեոն Միրադյանի գործունեությանը վերաբերող հավաքույն տվյալներ և լուսանկարներ, ինչպես և Թրիխտի ու Բարվի սովետական շրջանի թատերական կյանքի մասին նորանոր նյութեր:

Երաժշտական բաժնի ստացած ամենախոշոր հավաքածուն պատկանում է նշանավոր երաժշտագետ Վասիլ Ղուրդանյանին (Կորգանով): Սփյուռքահայ երգահան Բարսեղ Կոնաչյանի և սովետահայ երգահան Հարո Ստեփանյանի արխիվները հսկայական նյութ են պարունակում ինչպես այդ հեղինակների բազմազան ստեղծագործական կյանքի, այնպես էլ երաժշտական աշխարհի հետ նրանց ունեցած սերտ կապի մասին՝ արտասահմանում և Սովետական Միությունում: Այս բաժնի նյութերի մեջ անհրաժեշտ է նշել ԱՄՆ-ում Արամ Խաչատրյանի համերգների առթիվ ամերիկյան մամուլի արձագանքներն ամփոփող 10 շքեղ ալբոմները, որոնք նվիրել է ամերիկահայ Առն Քեշիշյանը:

Շնորհակալությամբ պետք է նշել, որ Թանգարանի հավաքածուների հարստացմանը մեծապես օգնել են սփյուռքահայությունից հետ մշակութային կապի կոմիտեն, Կաթողիկոսական դիվանը, ինչպես և Թանգարանի հաղարավոր բարեկամները՝ Բայր հայրենիքում և արտասահմանում:

Տարեցտարի չտացվող ձեռագրերն ու վավերագրերն, ըստ իրենց կարևորությունների և լրիվության, ենթարկվում են գիտատեխնիկական մշակման և զրկում գիտական շրջանառության մեջ: Այս կարգով տարեկան մշակվում է 25—30 հազար արխիվային միավոր: Միայն անցյալ տարի թանգարանի գրական, թատերական, երաժշտական բաժինների արխիվային նյութերից, նկարչական-լուսանկարչական ֆոնդերից 1943 պահանջադրով օգտվել են գիտնականներ, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, կինոյի և հրատարակչությունների հարյուրավոր աշխատողներ: Գիտական շրջանառության մեջ են զրկել 21107 վավերագիր և լուսանկար:

Նույն կարգով թանգարանի հայագիտական և անհատական գրադարաններից 923 պահանջադրով գիտաշխատողներին տրամադրվել է 5433 գիրք և մամուլի հավաքածու:

Թանգարանի կուլեկտիվը կատարում է նաև գիտահետազոտական աշխատանք: Թանգարանում զրոգների և զրական կադմակերպությունների արխիվներում պահպանված անտիպ նյութերի հիման վրա պատրաստվել և հրատարակության են հանձնվել «Գրական ժառանգություն» մատենաշարի հետևյալ հատորները.

«Ղևոնդ Ալիշանի անտիպ նամակներ» — 12 մամուլ.

«Դ. Դեմիրճյանի անտիպ երկեր» — 20 մամուլ.

«Հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից» — 12 մամուլ.

«Ժամանակակիցների հուշերը հայ դասական զրոգների մասին» — 16 մամուլ:

Այդ նույն ժամանակաշրջանում հրատարակվել է թանգարանային հավաքածուների և ցուցահանդեսների 2 մամուլ ծավալով համառոտ ուղեցույցը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Շուտով լույս կտեսնի «Թանգարանի երաժշտական բաժնի արխիվային ֆոնդերի ուղեցույցը» 8 մամուլ ծավալով:

Ներկայումս թանգարանի առջև խնդիր է դրված ստեղծել ամբողջ արխիվային ֆոնդի լրիվ կատալոգը, որի շնորհիվ եղած նյութերը դրվելու են համամիութենական շրջանառության մեջ: Այդպիսի ծավալուն տեղեկատու-գրականություն ստեղծելու դժրծում թանգարանին անհրաժեշտ է զրական, թատերական, երաժշտական, գիտական կադմակերպությունների օժանդակությունը. որոնք, ցավոք, երբեմն խուսափում են դրանից: Օրինակ՝ վերջին տարիներս թանգարանը զրոգներին ու զրականագետներին մի հարցաթերթ առաջարկեց. նպատակ ունենալով ստեղծել և աստիճանաբար համալրել զրական աշխատանքով զբաղվող մտավորականության ընդհանուր քարտաշարը: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հարյուրավոր հալ զրոգներից հարցաթերթին պատասխանեցին 90 հոգի: Մինչդեռ թանգարանը ղեմավարական երկրների և սփյուռքահայ կենտրոնների մշակութային կադմակերպություններից պարբերաբար դիմումներ է ստանում, որոնք խնդրում են կենսագրական տեղեկություններ հայտնել նրանց հրատարակության պատրաստվող այս կամ այն ժողովածուի համար: Այդպիսի դեպքերում թանգարանն ընկնում է անելանելի զրության մեջ:

Տարվա ընթացքում թանգարանը կադմակերպել է՝ Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի 30-ամյակին, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Գ. Զանիբեկյանի ծննդյան 70-ամյակին, Ղազախական արվեստի 10-օրյակին նվիր-

ված ցուցահանդեսներ, որոնք թատերական և դրական բաժինների մշտական ցուցահանդեսների հետ միասին մասնականների մեջ պրոպագանդել են սովետահայ դրականության և արվեստի նվաճումները: Թատերական բաժնի շրջիկ ցուցահանդեսը ցուցադրվել է Եղեգնաձորի, Աղիզբեկովի, Զերմուկի աշխատավորության համար: Այսպիսով, թանգարանի բոլոր ցուցահանդեսները միասին ընդգրկել են մոտ 67 հազար այցելու:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակին, Հովհ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 100-ամյակներին նվիրված ցուցահանդեսների կազմակերպման համար: Արդեն կազմված են այդ ցուցահանդեսների թեմատիկ պլանները, ընտրված են նյութերը, պատրաստված որոշ դրաֆիկ և գեղանկարչական նմուշներ: Այդ ցուցահանդեսները բացվելու են այս և հաջորդ տարում:

Թանգարանային գիտխորհուրդը, որի կազմի մեջ մտնում են մայրաքաղաքի գրական, թատերական, Երաժշտական նշանավոր գործիչներ, քննարկում ու հաստատում է թանգարանի գործունեությանը վերաբերող ծրագրերը, պլանավորում կազմակերպելիք ցուցահանդեսները, հսկում այդ ցուցահանդեսների բարձր մակարդակով կազմակերպմանը: Թանգարանին կից գործում է նաև միջթանգարանային գիտխորհուրդը, որը ղեկավարում է հանրապետության ղանադան վայրերում և մայրաքաղաքում գործող գրող-արվեստագետների, տուն-թանգարանների աշխատանքը: Միջթանգարանային գիտխորհուրդը անցյալ տարի քննարկել և ընդունել է Պ. Պոռչյանի (Աշտարակ) տուն-թանգարանի նոր ցուցադրումը, քննարկել է Հ. Հովհաննիսյանի (Էջմիածին) տուն-թանգարանի նոր ցուցահանդեսը և դիտողություններ արել այն արմատապես վերակառուցելու մասին: Քննարկել է Խ. Աբովյանի տուն-թանգարանի (Քանաքեռ) նոր շենքի կառուցման խնդիրը և դիտողություններ արել ներկայացված ճարտարապետական նախագծի առթիվ:

Ձգալի աշխատանք է տարվել այլ թանգարաններում և արխիվներում պահպանվող հայ մշակույթի վերաբերյալ եղած վավերագրերի լուսանկար պատճեններ հանելու և հիմնական ֆոնդերին միացնելու ուղղությամբ, որը ղգալի ղյուրություն է ստեղծում հայ գիտնականների համար՝ տեղում իրենց հետաքրքրող վավերագրերին ծանոթանալու:

Տարվա ընթացքում թանգարանին հաջողվեց ստեղծել ձայնագրման կաբինետ: Խնդիր է դրվում ձայնագրել և սերունդներին հասցնել նշանավոր գրողների, արվեստագետների ելույթները, ինչպես և առանձին օպերային և դրամատիկական ներկայացումներ: Անցյալ տարի այս ուղղությամբ քիչ բան արվեց: Թանգարանը նպատակ է դնում առաջիկայում լրացնել այդ բացը:

Գ. ՄԱԳՈՅԱՆ

Թանգարանի գիտխորհուրդ